ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 78/09

Քաղ. Երևան 23 հոկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ.Վարդանյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. հոկտեմբերի 23-ի նիստում (արձանագրություն № 74/5) քննարկեց Tovarichtchestvo s ogranichennoy otvetstvennostyu «GLOBALINK» Transportation and Logisrics Worldwide (KZ) ընկերության (այսուհետ՝ նաև «GLOBALINK» ընկերություն) ներկայացուցիչ, ՀՀ արտոնագրային հավատարմատար Զ.Մանուկյանի ներկայացված 2009թ. սեպտեմբերի 25-ի բողոքը (մտից հ.746, 25.09.2009թ.) ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի՝ «GLOBALINK» ընկերության GLOBALINK IR 950115 համակցված ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում 39-րդ դասի ծառայությունների համար մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը բողոքում նշում է, որ 2009թ. հուլիսի 15-ի որոշմամբ կրկնական փորձաքննությունը՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 15.2-րդ, 93.2-րդ և 105.2-րդ կետերի համաձայն GLOBALINK (IR 950115) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում 39-րդ դասի ծառայությունների համար նախնական մերժման մասին որոշումը թողել է անփոփոխ՝ համարելով, որ նշանը չի կարող գրանցվել նույնատիպ ապրանքների և ծառայությունների համար՝ ՀՀ միջազգային պայմանագրերի համաձայն միջազգային գրանցում ունեցող ավելի վաղ առաջնությամբ «NUMBER 1 LOGISTICS GROUP S.P.A.-SOCIO UNICO» (IT) ընկերության անունով գրանցված NUMBER 1 LOGISTICS GROUP IR 676318 և IR676389 շփոթելու աստիճան նման ապրանքային նշանների առկայության պատճառով:

Համաձայն չլինելով որոշման հետ բողոքարկողը բերում է հետևյալ փաստարկները:

Բողոքարկողը շեշտում է, որ հայտարկված նշանի գերիշխող մասը կազմում է GLOBALINK բառի ոճավորված գրառումը՝ ընկերության ֆիրմային անվանումից: Պատահական չէ, որ հենց այդ բառի հետ է կապված նշանի պատկերային մասը՝ «O» տառը, որն կատարված է գլոբուսի տեսքով, իսկ մնացած գրառումները՝ Logistics Group և Smart Logisitics, կատարված են շատ ավելի փոքր տառատեսակով: Մինչդեռ հակադրված նշաններում գերիշխող մասը զբաղեցնում է գովաբանական բնույթ ունեցող NUMBER 1 գրառումը և դրա գրաֆիկական ձևավորումը: Միայն ներքևում սովորական տառատեսակով գրված է LOGISTICS GROUP:

Նա նշում է նաև, որ Logistic Group արտահայտությունը արդեն իսկ մատնանշում է տվյալ կազմակերպության գործունեության ոլորտը և նպատակը՝ լոգիստիկա, այն է՝ շուկայում ապրանքների առաջխաղացման կազմակերպումը և վերահսկումը, համապատասխան ենթակառուցվածքի ստեղծումը: Առանձին, որպես այդպիսին, «լոգիստիկա» բառը ինքնուրույն պաշտպանության ենթական չէ, անգամ եթե փորձաքննության կողմից հատուկ չի նշվել որպես պաշտպանությունից հանված:

Բողոքարկողը համարում է, որ այս ամենը գիտակցելով, հայտարկվող նշանի սեփականատերը՝ միջազգային հայտ ներկայացնելիս, ի սկզբանե հատուկ նշել է, որ չի հավակնում «Logistics Group», ինչպես նաև «Smart Logistics» արտահայտությունների առանձին պահպանությանը: Բառային մասերից նա հավակնում է միայն իր ընկերության անվանումից բխող GLOBALINK արտահայտության պահպանությանը, ինչպես նաև նշանի պահպանությանը ամբողջությամբ՝ իր յուրահատուկ դիզայնով: Ուստի բողոքարկողը գտնում է, որ հայտարկված և հակադրված նշանները կարող են զուգահեռ գոյություն ունենալ հայկական շուկայում, առանց վնասելու սեփականատերերի շահերին:

Այսպիսով, ելնելով բերված փաստարկներից, բողոքարկողը խնդրում է վերանայել փորձաքննության որոշումը և պահպանություն ընձեռել GLOBALINK IR 950115 համակցված ապրանքային նշանին Հայաստանի Հանրապետության տարածքում հայտարկված բոլոր դասերի համար:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը համաձայնվեց բողոքարկողի փաստարկներին և համարում է, որ հակադրված NUMBER 1 LOGISTICS GROUP IR676318 և IR676389 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման չէ հայտարկված IR 950115 միջազգային գրանցմամբ GLOBALINK համակցված ապրանքային նշանի, քանի որ ընդհանուր առմամբ չեն զուգորդվում նհայտարկված նշանի հետ և մարդու մոտ չեն առաջացնում նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության կամ իմաստի ընկալման զգացողություն: Հետևապես, GLOBALINK IR 950115 համակցված ապրանքային նշանի գրանցումը 39-րդ դասի համար մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումը ենթակա է չեղյալ ճանաչման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության

բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել Tovarichtchestvo s ogranichennoy otvetstvennostyu «GLOBALINK» Transportation and Logisrics Worldwide (KZ) ընկերության բողոքը ամբողջովին, չեղյալ ճանաչել GLOBALINK IR 950115 ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 2009թ. հուլիսի 15-ի կրկնական փորձաքննության որոշումը և GLOBALINK IR 950115 ապրանքային նշանի գրանցման գործողությունը տարածել Հայաստանի Հանրապետությունում 39-րդ դասի նշված ծառայությունների համար:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան